## ԵԿԱՅ ԱՀԱ ՈՒ Կ'ԵՐԹԱՄ...

ՈՒՇԱՑԱԾ ՏՈՒՐՔ
ԿԻՒՐԵՂ ՊԱՏՐԻԱՐՔԻ
ՊԱՅԾԱՌ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Եկայ ահա ու կ'երթամ, հոգիս զերդ ծով մ'ալեկոծ.
Կ'անցնիմ թէպէտ ես հանդարտ, բայց բորբոքուն ես նընոց:

Ըսի, խըմեմ սէր-գինի մինչեւ հոգիս յագենայ,
Անմահական նեկտարին որ ան ծարաւ չըզգընայ:

Ըսի, նայիմ աստղերուն, ծաղիկներուն, կոյսերուն,
Հոգիս մինչեւ լիանայ,
Որ երբ երթայ ան հեռուն,
Աչքը ետեւ չըմընայ:

◆

## ՔԱՌԵԱԿՆԵՐ

Անցեր եմ ես ցամաք ու ծով, եկեր հիմա հասեր հոս,
Հոգւոյս մէջ մերթ պայծառ արեւ, մերթ փոթորիկ ու քաոս,
Հետեւեր եմ ձայնիդ ես միշտ եւ փընտռեր եմ ամենուր,
Բայց չեմ գըտեր ըզքեզ բընաւ. սըրտիս մէջ գահդ է թափուր:

◆

(ԻՐԻԿՆԱՅԻՆ)

Աշխարհն անսահման տաճար մ'է հիմա,
Եւ ես զարնըւած, ես խեղճ քահանայ,
Եւ ես հըսկումի կեցած եմ ահա,
Նարեկացին ալ շըրթներուս վըրայ:

Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

digitised by A.R.A.R.@